Սերմնաբուծության և սերմարտադրության ծրագրերի իրականացման ընթացքի, արդյունքների և առաջիկա խնդիրների մասին

Բուսաբուծության ճյուղի արդյունավետության և զարգացման ապահովման կարևոր նախապայմանը սերմնաբուծության, սերմնապահովության կայուն և գործուն համակարգի առկայությունն է:

Տարիներ շարունակ ֆերմերային տնտեսությունների կողմից օգտագործվում էր սեփական արտադրության, անհայտ ծագման և վերարտադրության սերմացուներ, տարեցտարի նվազում էր հացահատիկի ցանքատարածություններն ու համախառն բերքը, ցածր էր բերքատվությունը, արդյունքում նվազում էին հողօգտագործողների եկամուտները:

Հանրապետությունում պարենային ապահովության բարձրացման, հացահատիկի և կերարտադրության ծավալների ավելացման համար անհարժեշտություն էր առաջացել հացահատիկային և կերային մշակաբույսերի արտադրությամբ զբաղվող գյուղացիական տնտեսություններին ապահովել բարձր վերարտադրության, որակյալ սերմացուներով: Սորտաթարմացման նպատակով արտերկրից ներկրել բերքատվության մեծ պոտենցիալ ունեցող, բարձր վերարտադրության ցորենի, գարու, եգիպտացորեն, առվույտի և կորնգանի սորտերի սերմացուներ:

Ծագած խնդիրներին լուծում տալու նպատակով՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ սկսած 2010 թվականից ՀՀ կառավարության կողմից հաստատվել են մի շարք ծրագրեր, որոնք միտված են հանրապետությունում հացահատիկային և կերային մշակաբույսերի ցանքատարածությունների, արտադրության ծավալների ավելացմանը և ինքնաբավության մակարդակի բարձրացմանը:

ՀՀ կառավարության 2010 թվականի հուլիսի 29-ի N 971-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցո-րենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման», ՀՀ կառավարության 2012 թվականի օգոստոսի 16-ի N 1037-Ն և ՀՀ կառավարության 2013 թվականի օգոստոսի 1-ի N 843-Ն որոշումներով հաստատված Հայաստանի Հանրապետության 2012-2017, 2013-2018 թվականների աշնանացան ցորենի սերմնաբուծության, բարձր վերարտադրության սերմերի արտադրության զարգացման» ծրագերի իրականացման համար.

2010 թվականին պետական բյուջեով նախատեսվել էր 558 մլն դրամ: ՌԴ-ից ներկրվել է աշնանացան ցորենի՝ «Կրասնոդարսկայա 99», «Բատկո», «Նոտա», «Կոլլեգա», «Տանյա», «Եսաուլ» և «Յուբիլեյնայա-100» սորտերի 1010,1 տ (1կգ՝ 340.5 դր.) և տեղական սերմարտադրողներից գնվել է 117 տ (1կգ՝ 210 դր.) աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու: 1127,1 տ սերմացուի գնման համար ծախսվել է 368.5 մլն. դրամ, իսկ ծրագրի իրականացման համար՝ 450.9 մլն դր. (ԱԱՀ, մաքսային ձևակերպումներ, բեռնաթափում-բարձում և բեռնափոխադրում՝ 82.5մլն. դր): Տնտեսված 107.05 մլն դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

ՌԴ-ից ներկրված սերմացուից 50 տոննան հատկացվել է ԼՂՀ-ին,

10,1 տոննան՝ սորտափորձարկումներ իրականացնելու համար,

1067 տոննա սերմացուն հատկացվել է 146 շահառուի, որով ցանք է կատարվել 3556 հա վրա, ապահովելով հեկտարից 38-40ց միջին բերք:

Ծրագրով նախատեսված է շահառուներին հատակացված էլիտային վերարտադրության սերմացուից ստացված 1-ին վերարտադրության սերացուի հետվերադարձ 1:2 փոխհարաբերությամբ: Սերմացուի հետվերադարձը կատարվել է ամբողջությամբ՝ 2010 թվականի աշնանը հատկացված 1067 տ էլիտային սերմացուի դիմաց 2011 թվականի բերքահավաքից հետո հետ է վերադարձվել 2134 տ 1-ին վերարտադրության սերմացու, որը նույն աշնանը պայմանագրային հիմունքներով հատկացվել է հողօգտագործողներին հաջորդ տարի բերքահավաքից հետո 1 կգ սերմացուի դիմաց 160 դրամ գումարի վերադարձման պայմանով:

2011 թվականի ծրագրի իրականացման համար նախատեսվել էր 646.8 մլն. դր: ՌԴ-ից ներկրվել է աշնանացան ցորենի վերը նշված, նույն 7 սորտերի 1150 տ էլիտային վերարտադրության սերմացու, որի արժեքը կազմել է 324,2 մլն. դրամ, 1կգ՝ 281.9 դրամով, ծրագրում ընդգրկված շահառուներից գնվել է 1183 տ 1-ին վերարտադրության սերմացու 224.8 մլն. դր. արժեքով, 1կգ՝ 190 դրամով: Ծրագիր իրականացման ծախսերը կազմել են 612.4 մլն դրամ (մաքսային ձևակերպումներ, բեռնաթափում-բարձում և բեռնափոխադրում՝ 63.4 մլն. դր): Տնտեսվել է 34.4 մլն դրամ:

Ներկրված սերմացուից՝

50 տոննա հատկացվել է ԼՂՀ-ին,

1100 տոննա ծրագրի 255 շահառունին, որով կատարվել է 3667 հա ցանք ապահովելով հեկտարից 36-38 ց միջին բերք:

2011 թվականի աշնանացանի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու և ցանքատարածություններն ավելացնելու նպատակով ՀՀ մարզերին է տրամադրվել 3317 տ 1-ին վերարտադրության սերմացու (որից՝ 2134 տ հետ վերադարձված և 1183 տ գնված), որով ցանք է կատարվել 11000 հա հողատարածքի վրա:

Թվով 255 շահառուները, 1:2 փոխհարաբերությամբ, պետք է ապահովեին 2200 տ 1-ին վերարտադրության սերմացուի հետվերադարձը: Նրանցից 140-ն ապահովել են սերմացուի հետվերադարձը՝ 1260 տ, իսկ թվով 115 շահառու չեն ապահովել 940 տ սերմացուի հետվերադարձը:

Հաշվի առնելով 2012 թվականի գարնանը ՀՀ Գեղարքունիքի, Արարատի և Արմավիրի մարզերի ծրագրում ընդգրկված շահառուներից նախարարություն ստացված գրավոր ահազանգերը և բողոքները՝ ստեղծվել է անկողմնակալ հանձնաժողով, որը իրականացրել է հացահատիկային մշակաբույսերի ցանքատարածությունների ուսումնասիրություններ և ներկայացրել մասնագիտական եզրակացություն, համաձայն որի, սերմերի ծլունակության և դրանց որակի վերաբերյալ մարզերից ստացված բողոքները չեն հիմնավորվել և աշնանացանի վատ վիճակը հիմնականում պայմանավորված է բնակլիմայական պայմաններով, իսկ ներկրված սերմերացուների սորտերը կայուն էին և բարձր բերքատու:

115 շահառուներից 9-ի պարտավորությունները ՀՀ Արմավիրի մարզում 2013 թվականի մայիսին տեղացած կարկուտի պատճառած վնասները մեղմելու նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ զիջվել են:

Հաշվի առնելով, որ 2011 թվականին շահառուների կողմից պարտավորությունների չկատարելը պայմանավորված է եղել բնակլիմայական անբարենպաստ պայմաններով՝ ընդունվել է ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 4-ի «Անբարենպաստ

բնակլիմայական պայմանների հետևանքով աշնանացան ցորենի 1-ին վերարտադրության սերմացուների վերադարձը չապահոված շահառուների հետ կնքված պայմանագրերում փոփոխություններ կատարելը թույլատրելու մասին» N 1368-Ն որոշումը, որով նախատեսվել է 103 շահառուների կողմից 2011 թվականին ստացած յուրաքանչյուր 1կգ էլիտային վերարտադրության աշնանացան ցորենի սերմացուի 420 դրամի փոխարեն վճարել 200 դրամ, սահմանելով ընդհանուր գումարի վճարման 4 տարվա ժամանակացույց՝ սկսած 2015 թվականից, յուրաքանչյուր տարվա համար 25 %-ի չափով, մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը վճարման պայմանով: 432,8 տ սերմացուի դիմաց հետ վերադարձման պարտքը կազմում է 86,5 մլն դր: 2015 թվականի մարտի 20-ի դրությամբ 103 շահառուների հետ կնքվել է հաշտության համաձայնագիր, որից 89-ը վավերացվել է դատրանի վճռով, 9-ը շահառուների վերաբերյալ դատաքննությունը ընթացքի մեջ է, իսկ 5-ը՝ պարտքն ամբողջությամբ վճարել են:

2012 թվականին ծրագրի իրականացման համար նախատեսվել է 596,89 մլն դրամ: Ծրագիր իրականացման ծախսերը կազմել են 574.5 մլն դրամ (մաքսային ձևակերպումներ, բեռնաթափում-բարձում և բեռնափոխադրում՝ 27 մլն. դր): Տնտեսվել է 22.4 մլն դրամ:

ՌԴ-ից ներկրվել է 640 տ աշնանացան ցորենի էլիտային վերարտադրության սերմացու վերը նշված 7 սորտերից 3-ը՝ «Կոլեգա», «Տանյա» և «Կրասնոդարսկայա 99» (ներկրման ծավալի նվազման պատճառով): Նշված քանակի սերմացուն գնվել է 228, 4 մլն դր. արժեքով, 1կգ՝ 357 դրամով, որը հատկացվել է 175 շահառուներին, կատարվել է 2130 հա ցանք, ապահովելով 40-42 g/հա միջին բերք:

2012 թվականին ՌԴ-ից ներկրվել է նաև 20 տ սուպերէլիտային վերարտադրության սերմացու՝ 8.2 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 408.5 դրամով: Այն հատկացվել է գրանցված 12 սերմարադրողների՝ էլիտային վերարտադրության սերմացուի արտադրություն կազմակերպելու նպատակով:

2012 թվականի աշնանացանի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու և ցանքատարածություններն ավելացնելու նպատակով ՀՀ մարզերին է տրամադրվել 2741 տ 1-ին վերարտադրության սերմացու, որից՝ 1260 տ հետ վերադարձված և 1481 տ ծրագրի շահառուներից գնված: 1481 տ ձեռք է բերվել 311,0 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 210 դրամով: Այն հատկացվել է մարզերի մինչև 3 հա հողատարածք ունեցող հողօգտագործողներին հաջորդ տարի բերքահավաքից հետո 1 կգ-ի դիմաց 160 դրամ վճարելու պայմանով: Նշված քանակի սերմացուով ցանք է կատարվել 9136 հա:

175 շահառուներից 173-ն ապահովել են 1269,2 տ աշնանացան ցորենի 1-ին վերարտադրության սերմացուների հետվերադարձը: ՀՀ Արմավիրի մարզում 2013 թվականի կարկտահարության հետևանքների մեղման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ 100 տոկոսով զիջվել է նաև մեկ շահառուի՝ 6 տ պարտավորությունը, իսկ ՀՀ Գեղարքունիքի մարզի մեկ շահառու չի ապահովել 4,8 տ սերմացուի հետվերադարձը, որի վերաբերյալ գործը դատաքննության ընթացքի մեջ է:

Հողօգտագործողների կողմից 2741 տ սերմացուի դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 438,6 մլն դրամ, որից 2015 թվականի մարտի 20-ի դրությամբ վճարվել է 389,9 մլն դրամ, պարտքը կազմում է 48.7 մլն դրամ:

2013 թվականին ծրագրի իրականացման համար նախատեսվել է 680.9 մլն դրամ, որից՝ 550 մլն. դրամ ՀՀ պետական բյուջեից, իսկ 130.9 մլն դրամը «Սերմերի գործակալություն»

ՊՈԱԿ-ի նպատակային հաշվի և տնտեսված մի-ջոցներից (64.1 մլն.դր): Ծրագրի իրականացման համար նախատեսված գումարն ամբողջությամբ ծախսվել է:

ՌԴ-ից ներկրվել է 440 տ էլիտային վերարտադրության սերմացու՝ 142.1մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 323 դրամով, իսկ հանրապետության սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսավարող սուբյեկտներից գնվել է 63.1 տննա՝ 13.3 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 210 դրամով: 2012 թվականին 12 շահառուներին հատկացված 20 տ սուպերէլիտային սերմացուի դիմաց 2013 թվականի բերքահավաքից հետո հետ է վերադարձվել 40 տ էլիտային վերարտադրության սերմացու: Ընդամենը 543,1 տ էլիտային վերարտադրության սերմացուն տրամադրվել է 126 շահառուի, որով կատարվել է 1810 հա ցանք, ապահովելով հեկտարից 43-45 ց միջին բերք:

ՌԴ-ից ներկրվել է նաև 20 տ սուպերէլիտային վերարտադրության սերմացու՝ 11.0 մլն դր արժեքով, 1 կգ՝ 550 դրամով: Այն հատկացվել է 12 գրանցված սերմարտադրողների՝ էլիտային վերարտադրության սերմացուների արտադրություն կազմակերպելու նպատակով:

2013 թվականի աշնանացանի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու, ցանքատարածությունները և համախառն բերքի ծավալներն ավելացնելու նպատակով ՀՀ մարզերին է տրամադրվել 3809.2 տ 1-ին վերարտադրության սերմացու, որից՝ 1269,2 տ հետ վերադարձված և ծրագրի շահառուներից գնված 2540,0 տ՝ 482,6 մլն դրամ արժեքով, 1կգ՝ 190 դրամով: Այն հատկացվել է ՀՀ մարզերի մինչև 3 հա հողատարածք ունեցող հողօգտագործողներին հաջորդ տարի բերքահավաքից հետո 1 կգ-ի դիմաց 160 դրամ վճարելու պայմանով: Նշված 3809.2 տ սերմացուով կատարվել է 12697 հա ցանք:

3809.2 տ-ից ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում 2013 թվականի մայիսին տեղացած կարկուտի պատճառած վնասները մեղմելու նպատակով 716,4 տ սերմացուի դիմաց 114.6 մլն դրամ գումարի վճարման հարցը կքննարկվի 2015 թվականի հուլիս ամսին:

2013 թվականին տրամադրված 3092.8 տ աշնանացան ցորենի 1-ին վերարտադրության սերմացուի դիմաց վճարման ենթակա 494.8 մլն դրամից, 20.03.2015 թվականի դրությամբ վճարվել է 378.0 մլն դրամ, պարտքը կազմում է116.8 մլն դրամ:

2012-2013 թվականների համապատասխանաբար 48.7 և 116.8 մլն դրամ պարտքերի վճարումներն ընթացքի մեջ են, որոնց վերջնաժամկետ է սահմանվել 2015 թվականի ապրիլի 1-ը:

2014 թվականին ծրագրի իրականացման համար նախատեսվել է 589.2 մլն դրամ, որից՝ 550 մլն. դրամ ՀՀ պետական բյուջեից, իսկ 39.2 մլն դրամը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվից: Ծրագրի իրականացման համար նախատեսված գումարն ամբողջությամբ ծախսվել է:

Ծրագրով ՌԴ-ից աշնանացան ցորենի էլիտային սերմացուի ներկրում նախատեսված չէ:

2013 թվականին 12 շահառուներին հատկացված 20 տ սուպերէլիտային սերմացուով կատարված 80 հա ցանքերից հետ է վերադարձվել 40 տ էլիտային վերարտադրության սերմացու և նրանցից գնվել 223.8 տ՝ 42.5 մլն. դրամ արժեքով, 1 կգ՝ 190 դրամով: Այն տրամադրվել է 72 շահառուի, որով կատարվել է շուրջ 879 հա ցանք:

2014 թվականի աշնանացանի աշխատանքներն արդյունավետ կազմակերպելու և ցանքատարածություններն ավելացնելու նպատակով ՀՀ մարզերից ստացված ամբողջ պահանջարկը 4212,9 տ 1-ին վերարտադրության սերմացու ամբողջությամբ բավարարվել է: Նշված քանակից՝ 1086,2 տոննան հետ վերադարձվածն է, իսկ 3126,7 տոննան ծրագրի շահառուներից գնվածը՝ 531,5 մլն դր արժեքով, 1 կգ-ը՝ 170 դրամով: Այն հատկացվել է ՀՀ մարզերի մինչև 3 հա հողատարածք ունեցող հողօգտագործողներին 2015 թվականի բերքահավաքից հետո 1 կգ-ը

160 դրամով վճարելու պայմանով: Նշված 4212.9 տոննա սերմացուով կատարվել է 14000 հա ցանք: 2014 թվականին տրամադրված 4212,9 տոննա աշնանացան ցորենի 1-ին վերարտադրության սերմացուի դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 674.1մլն դրամ, որի հետվերադարձը կիրականացվի 2015 թվականի բերքահավաքից հետո:

2015 թվականի բերքահավաքից հետո հետ կվերադարձվի 527,6 տ աշնանացան ցորենի 1-ին վերատադրության սերմացու և 2015 թվականի աշնանացանի համար ՀՀ մարզերից ստացված հողօգտագործողների վճարունակ պահանջարկի հիման վրա ծրագրում ընդգրկված շահառուներից կիրականացվի գնում, իսկ մնացածը ձեռք կբերվի ՌԴ-ից «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվեհամարներում առկա միջոցներով, քանի որ ծրագրի ավարտման պատճառով ՀՀ պետական բյուջեով այդ նպատակների համար գումար նախատեսված չէ: Ինչպես նաև ՌԴ Կրասնադարի մարզի Լուկյանենկոյի անվան գիտահետազոտական ինստիտուտից կներկրվի մինրև 50 տ աշնանացան ցորենի սուպերէլիտային վերարտադրության սերմացու:

Հայաստանի Հանրապետությունում 2010-2014 թվականներին ցորենի սերմնաբուծության և սերմարտադրության զարգացման և 2012-2017, 2013-2018 թվականների աշնանացան ցորենի սերմնաբուծության, բարձր վերարտադրության սերմերի արտադրության զարգացման ծրագերի շրջանակներում՝

• ՌԴ-ից ներկրվել է աշնանացան ցորենի **3240 տ էլիտային վերարտադրության սերմացու՝ 1մլդ 38.6 մլն. դրամ արժեքով, 1 կգ՝ 320.5 դրամով և 40 տ սուպերէլիտային վերարտադրության՝ 19.2 մլն. դրամ արժեքով, 1 կգ՝ 480 դրամով:**

• Տեղական սերմարտադրողներից գնվել է՝ 403.9 տ էլիտային վերարտադրության սերմացու 80.3 մլն. դրամ արժեքով, 1 կգ՝ 199 դրամով:

• 2010-2014 թվականներին ՌԴ-ից ներկրված 3240 տ և տեղական սերմարտադրողներից գնված՝ 403.9 տ, ընդամենը՝ 3643.9 տ էլիտային սերմացուն հատկացվել է ՀՀ մարզերի 7 և ավելի հա հողատարածք ունեցող 774 շահառուների (115-ը հետվերադարձ չեն ապահովել), որոնք 1:2 փոխհարաբերությամբ հետ են վերադարձրել 5749.2 տ 1-ին վերարտադրության սերմացու:

• 2010-2014 թվականներին ծրագրում ընդգրկված շահառուներից գնվել է 8330.7 տ 1-ին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացու՝ 1 549,9 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 186 դրամով:

• ՌԴ-ից ներկրված 3240 տ էլիտային, 40 տ՝ սուպերէլիտային, տեղական սերմարտադրողներից ձեռքբերված 403.9 տ էլիտային և ծրագրում ընդգրկված շահառուներից գնված 8330.7 տ 1-ին վերարտադրության աշնանացան ցորենի սերմացների գնման արժեքը կազմում է՝ 2 688 մլն դրամ, իսկ ծրագրի իրականացման համար ընդամենը ծախսվել է 2 907.9 մլն դրամ, որից 219.9 մլն դրամը՝ ԱԱՀ-ի, մաքսային ձևակերպումների, բեռնաթափման-բեռնման, մարզեր բեռնափոխադրման և այլ ծախսերն են:

• 2011-2014 թվականների աշնանը հողօգտագործողներին հատկացված 1-ին վերարատադրության սերմացուների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 2 252.9 մլն դրամ, որից 2015 թվականի մարտի 20-ի դրությամբ վճարվել է 1 298.6 մլն դրամ, պատքը՝ 954.3 մլն. դրամ, որից 674.1 մլն. դրամը կվճարվի ընթացիկ տարվա բերքահավաքից հետո, 114.6 մլն. դրամի վերադարձման հարցը (ՀՀ Շիրակի և Լոռու մարզերում կակտահա-

ության պատճառով) կքննարկվի ս.թ. հուլիսին, իսկ 165.6 մլն. դրամ պատքի վճարումներն ընթացքի մեջ է, որոնց վճարման վերջնաժամկետ է սահմանված ս.թ. ապրիլի 1-ը:

2010-2014 թվականներին ծրագրի իրականացման համար ծախսվել է ընդամենը 2 907.9 մլն դրամ, հողօգտագործողների կողմից վճարումներն ամբողջությամբ տարեվերջին կատարելու դեպքում կկազմի 2 252.9 մլն դրամ, տարբերությունը՝ 655 մլն. դրամ:

• Մինչև 3 հա հողատարածքի վրա ցանք կատարած հողօգտագործողներին ծրագրի շահառուներից 186 դրամով (միջին արժեք) գնված 1 կգ 1-ին վերարտադրության սերմացուն հատկացվել է 160 դրամով, կամ 1 կգ սերմացուն սուբսիդավորվել է 26 դրամով: Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 366.1 մլն. դրամ (14079.9տ X 26 դր., որից 8337.7տ գնված և 5742.2տ հետվերադարձ):

• Հանրապետությունում 2013 թվականին աշնանացան ցորենի ցանքերն ընդամենը կազմել են 102.3 հազ. հա, 2014 թվականին՝ 107.6 հազ հա, որի համար համապատասխանաբար օգտագործվել է 30.7 և 32.3 հազ. տ սերմացու, որը կազմում է 2013 և 2014 թվականներին արտադրված ցորենի համախառն բերքի շուրջ 10 %-ը:

• Ծրագրի շրջանակներում ներկրված բարձր վերարտադրության սերմացուների բազմացմամբ հանրապետությունում աշնանացան ցորենի սերմացուի պահանջարկի 70-75 % սորտաթարմացվել է:

• 2011-2014 թվականներին հետ վերադարձված և գնված 14079.9 տ 1-ին վերարտադրության սերմացուներով կատարվել է 46933 հա ցանք, ապահովելով 187.7 հազ տ համախառն բերք, շուրջ 40 գ/հա միջին բերքատվությամբ, ՀՀ Արմավիրի, Շիրակի, Լոռու և Սյունիքի մարզերի ծրագրում ընդգրկված սերմարտադրողների ջրովի ցանքատարածություններում բերքատվությունը կազմել է 60-90 գ/հա :

• 2010 թվականին հացահատիկ և հատիկաընդեղեն մշակաբույսերի ցանքատարածությունը կազմել է՝ 157.6 հազ. հա, համախառն բերքը՝ 326.4 հազ. տ, միջին բերքը՝ 20.7 գ/հա, իսկ 2014 թվականին՝ ցանքատարածությունը կազմել է 185.7 հազ. հա, համախառն բերքը՝ 590.5 հազ. տ, միջին բերքը՝ 31.8 գ/հա, ավել է արտադրվել 261.4 հազ. տ կամ համախառն բերքն ավելացել է 80.9 %-ով, իսկ ցանքատարածություն՝ 28.1 հազ. հեկտարով:

• 2010 թվականին ցորենի ընդհանուր ցանքատարածությունը կազմել է՝ 87.6 հազ. հա, որից պահպանվածը՝ 86.6 հազ. հա, աշնանացան ցորենի ընդահանուր ցանքերը՝ 81.7 հազ. հա, պահպանվածը՝ 80.8 հազ. հա, ցորենի համախառն բերքը կազմել է 183.5 հազ. տ, որից աշնանացանինը՝ շուրջ 171.0 հազ. տ, միջին բերքը՝ 21.2 գ/հա, իսկ 2014 թվականին՝ ընդհանուր ցանքատարածությունը կազմել է՝ 106.3 հազ.հա, պահպանվածը՝ 104.8 հազ. հա, որից աշնանացան ցորենի ընդահանուր ցանքերը՝ 102.3 հազ. հա, պահպանվածը՝ 100.7 հազ. հա, ցորենի համախառն բերքը կազմել է 338.2 հազ. տ, որից աշնանացանինը՝ 325.8 հազ. տ, միջին բերքը՝ 32.3 գ/հա, ավել է արտադրվել 154.7 հազ. տ կամ համախառն բերքն ավելացել է 84.3 %-ով, իսկ ցանքատարածությունը՝ 18.2 հազ. հա-ով:

• Ցորենի ինքնաբավության մակարդակը (32 %-ից ավելացել է) 2014 թվականին կազմել է շուրջ 51 %:

• Նշված ծրագրերը նպաստել են նախարարության համակարգի գիտական կենտրոնների և մասնավոր սերմարտադրողների միջոցով տեղական սերմնաբուծության և սերմարտադրության զարգացմանը:

Հայաստանի Հանրապետությունում 2011 թվականի գարու և եգիպտացորենի արտադրության զարգացման ծրագերի իրականացման համար պետական բյուջեով նախատեսվել էր 773,3 մլն դրամ: Ուկրաինայից ներկրվել է գարնանացան գարու էլիտային վերարտադրության 1073 տ սերմացու 269,4 մլն դրամ արժեքով, 1կգ՝ 251 դրամով, 1-ին վերարտադրության՝ 946,1 տ՝ 219,1 մլն դրամ, 1կգ՝ 231,5 դրամով և եգիպտացորենի սերմացու՝ 63 տ՝ 33,3 մլն դրամ, 1կգ՝ 529 դրամով: 2082.1 տ սերմացուների գնման համար ծախսվել է 521,8 մլն դրամ, իսկ ծրագրերի իրականացման համար ընդհանուր ծախսերը կազմել են 766,9 մլն դրամ (երկաթգիծ, ԱԱՀ, մաքսային ձևակերպումներ, բեռնաթափում-բարձում և բեռնափոխադրում մարզեր՝ 245,1մլն. դր): Տնտեսված 6,4 մլն դրամը վերադարձվել է ՀՀ պետական բյուջե:

Ծրագրերի շրջանակներում ներկրված գարնանացան գարու էլիտային վերատադրության սերմացուն հողօգտագործողներին վաճառվել է 1 կգ 100, 1-ին վերատադրության սերմացուն՝ 70, իսկ եգիպտացորենը՝ 200 դրամով:

Ներկրված գարնանացան գարու էլիտային վերարտադրության սերմացուից՝ 50 տ անհատույց հատկացվել է ԼՂՀ-ին:

1969,1 տ էլիտային և 1-ին վերարտադրության գարնանացան գարու սերմացուն վաճառվել է 10827 շահառուի, որով կատարվել է 8950 հա ցանք, ապահովելով 27-28 g/հա միջին բերք:

63 տ եգիտացորենի սերմացուն վաճառվել է 1805 շահառուի, որով կատարվել է 2520 հա ցանք, ապահովելով հեկտարից 56-58 g միջին բերք:

Սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 335 մլն դրամ, որից 162 մլն դրամը էլիտային վերարտադրության սերմացու համար (1կգ-ի համար 151 դրամ), 152,3 մլն դրամը 1-ին վերատադրության սերմացուի համար (1 կգ- ի համար 161,5 դրամ), 20,7 մլն եգիպտացորենի սերմացու համար (1 կգ-ի համար 329 դրամ):

2013 թվականի ՀՀ կառավարության 2013 թվականի փետրվարի 21-ի N 165-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետությունում 2013 թվականին գարնանացան գարու, եգիպտացորենի, առվույտի և կորնգանի արտադրության զարգացման ծրագրերի իրականացման համար պետական բյուջեից նախատեսվել էր 615,9 մլն դրամ, իսկ 87,5 մլն դրամը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվից: Ծրագրի իրականացման համար ընդամենը ծախսվել է 666,7 մլն դրամ: Տնտեսվել է 36,7 մլն դրամ:

ՌԴ-ից ներկրվել է՝

- 700 տ գարնանացան գարու սերմացու, 238 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 340 դրամով, հողօգտագործողներին վաճառվել է՝ 130 դրամով, սուբսիդավորվել է՝ 210 դրամ.
- 9.5 տ եգիպտացորենի սերմացու, 5,5 մլն դրամ արժեքով, 1կգ՝ 583 դրամով, վաճառվել է 350 դրամով, սուբսիդավորվել է 233 դրամ.
- 52,1 տ առվույտի սերմացու, 129,8 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 2493 դրամով, վաճառվել է 1500 դրամով, սուբսիդավորվել է՝ 993 դրամ.
- 360 տ կորնգանի սերմացու, 226,1 մլն դրամ արժեքով, 1կգ՝ 628 դրամով, վաճառվել է 370 դրամով, սուբսիդավորվել՝ 258 դրամ:

Տեղական սերմարտադրողներից գնվել է՝

- 150 տոննա գարնանացան գարու սերմացու 30 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 200 դրամով, վաճառվել է 130 դրամով, սուբսիդավորվել՝ 70 դրամ,

- 40 տ կորնգանի սերմացու 23,8 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 594 դրամով, վաճառվել է 370 դրամով, սուբսիդավորվել՝ 224 դրամ:

Սերմացուների գների սուբսիդավորման ընդհանուր գումարը կազմել է 293,7 մլն դրամ, որից գարնանացան գարու համար՝ 147 մլն դրամ, եգիպտացորենինը՝ 2,2 մլն դրամ, առվույտինը՝ 51,7 մլն դրամ, կորնգանինը՝ 92,8 մլն: Սերմացուների դիմաց վճարումները կատարվել են ամբողջությամբ:

Հողօգտագործողների կողմից վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով համաձայան ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 941-Ն որոշման՝ 30 տ կորնգանի սերմացուն 11 մլն դրամ արժեքով անհատույց հատկացվել է ՀՀ Սյունիքի մարզին:

1311,6 տ նշված սերմացունները հատկացվել են 6262 շահառուի, որոնց կողմից կատարվել է գարնանացան գարու՝ 4250 հա, եգիպտացորենի՝ 380, առվույտի՝ 2084 և կորնգանի՝ 2400 հա ցանք: Ապահովելով հեկտարից շուրջ գարու՝ 30-31 g, եգիպտացորենի՝ 66-68 g միջին բերք:

2014 թվականի ՀՀ կառավարության 2014 թվականի փետրվարի 6-ի N 149-Ն որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման համար նախատեսվել էր 1189,2 մլն դրամ, որից 1169.2 մլն դրամը սերմացուների ձեռք բերման համար, իսկ 20 մլն դրամը՝ ծրագրի իրականացման համար (ԱԱՀ, մաքսային ձևակերպում-ներ, բեռնաթափում-բարձում և բեռնափոխադրում): Ծրագրի իրականացման համար ընդամենը ծախսվել է 1 132,9 մլն դրամ: Տնտեսված գումարը կազմում է 36,4 մլն դրամ, որն ամբողջությամբ փոխանցվել է ՀՀ պետական բյուջե:

ՌԴ-ից ներկրվել է՝

- գարնանացան գարու սերմացու՝ 1906,3 տ, 571,2 մլն դրամ արժեքով, 1կգ՝ 299,6 դրամ, հողօգտագործողներին 1 կգ վաճառվել է 130 դրամով, սուբսիդիան կազմել է 169.6 դրամ,
- եգիպտացորենի սերմացու 23,44 տ, 13,5 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 575,7 դրամ, վաճառվել է՝ 350 դրամով, սուբսիդիան կազմել է՝ 225.7 դրամ.
- առվույտի սերմացու՝ 168,35 տ, 395,6 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 2350 դրամ, վաճառվել է՝ 1500 դրամով, սուբսիդիան կազմել է՝ 850 դրամ.
- կորնգանի սերմացու՝ 169,96 տ, 124,1 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 730,2 դրամ, վաճառվել է՝ 370 դրամով, սուբսիդիան կազմել է՝ 360.2 դրամ.
- «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ից ձեռք է բերվել 150 տ գարնանացան գարու սերմացու, 28,5 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 190 դրամ, վաճառվել է 130 դրամով, սուբսիդիան կազմել է՝ 60 դրամ:

Ներկրված և տեղական սերմարտադրողից գնված 1906,3 տ գարնանացան գարու սերմացուից վաճառվել է ընդամենը 817.2 տ, 23,4 տ եգիպտացորենի սերմացուից՝ 4,6 տ, 168,4 տ առվույտի սերմացուից՝ 41,5 տ և 170 տ կորնգանի սերմացուից՝ 125,5 տոննա, որոնցով, ըստ մշակաբույսերի սահմանված ցանքի նորմաներով, կատարվել է 6767 հա ցանք, ապահովելով գարու 32-33 g/հա, եգիպտացորենի 70-72 g/հա միջին բերք:

Վճարունակ պահանջարկի բացակայության պատճառով չիրացված 1239,2 տ գարնանացան գարու, 18,8 տ եգիպտացորենի, 126,9 տ առվույտի և 44,5 տ կորնգանի սերմացուները ՀՀ կառավարության 2014 թվականի օգոստոսի 14-ի N 941-Ն որոշման համաձայն անվճար հատկացվել են ՀՀ մարզերին իրենց կողմից ներկայացված պահանջարկ-հայտերի քանակներով, որով ցանք կկատարվի 2015 թվականի գարնանը շուրջ 12321 հա վրա:

Հատկացված գարնանացան գարու սերմացուի դիմաց վճարում չի կատարել ՀՀ Գեղարքունիքի մարզը՝ 2,3 մլն դրամ:

2015 թվական ՀՀ կառավարության 2015 թվականի փետրվարի 5-ի N 93-Ն որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման համար «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվներից թույլատրվել է օգտագործել 667,8 մլն դրամ, որից 654,8 մլն դրամը՝ սերմացուների ձեռք բերման համար, իսկ մինչև 13 մլն դրամը՝ ծրագրի իրականացման համար (բեռնաթափում-բարձում և բեռնափոխադրում):

ՌԴ-ից ներկրվել է՝

1013.8 տ գարնանացան գարու սերմացու 329.1 մլն դրամ արժեքով, 1կգ՝ 324.6 դրամ, հողօգտագործողներին 1 կգ կվաճառվի 130 դրամով, սուբսիդավորվել է 194.6 դրամ,

5.3 տ եգիպտացորենի սերմացու 4.9 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 932.5 դրամ, կվաճառվի՝ 350 դրամով, սուբսիդավորվել է՝ 582.5 դրամ.

59.2 տ առվույտի սերմացու 159.7 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 2695 դրամ, կվաճառվի՝ 1500 դրամով, սուսիդավորվել է՝ 1195 դրամ.

247.8 տ կորնգանի սերմացու139.5 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 562.9 դրամ, կվաճառվի՝ 370 դրամով, սուբսիդիան կազմել է՝ 192.9 դրամ.

«Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ից ձեռք է բերվել 120 տոննա գարնանացան գարու սերմացու, 21.6 մլն դրամ արժեքով, 1 կգ՝ 180 դրամ, կվաճառվի՝ 130 դրամով, սուբսիդավորվել է՝ 50 դրամ:

Ծրագրով նախատեսված սերմացուները ՌԴ-ից ամբողջությամբ ներկրվել են, բաշխումն՝ ընթացքի մեջ է:

- Ծրագրերի իրականացման ընթացքում ՌԴ-ից ներկրվել է 5639 տ գարնանացան գարու սերմացու՝ 1 626.7 մլն. դրամ արժեքով, 1 կգ՝ միջինը 288.5 դրամով,
- «Գյումրիի սելեկցիոն կայան» ՓԲԸ-ից գնվել է՝ 420 տ էլիտային վերարտադրության գարնանացան գարու սերմացու 80.1 մլն. դրամ արժեքով, 1 կգ՝ միջինը 190.7 դրամով:
- Ընդամենը ձեռք է բերվել 6059.2 տ գարնանացան գարու սերմացու, 1 706.9 մլն դրամ արժեքով:

Ծրագրերի իրականացման ընթացքում ՌԴ-ից ներկրվել է՝

- 101.2 տ եգիպտացորենի սերմացու 57.3 մլն դրամ արժեքով, 1 կգ միջինը 566.2 դրամ.
- 279.7 տ առվույտի սերմացու 685.2 մլն. դրամ արժեքով, 1 կգմիջինը 2449.7 դրամ.
- 777.8 տ կորնգանի սերմացու 489.7 մլն. դրամ արժեքով, 1 կգ միջինը 629.6 դրամ: Տեղական սերմարտադրողից գնվել է 40 տոննա սերմացու, 23.8 մլն. դր արժեքով, 1 կգ 594 դրամով: Ընդամենը գնվել է 817.8 տ սերմացու, 513.5 մլն. դրամ արժեքով, 1 կգ միջինը 628 դրամով:
- Ծրագրերի շրջանակներում ներկրված և տեղական սերմարտադրողներից գնված սերմացուներով կատարվել է և կկատարվի 50984 հա ցանք, այդ թվում՝ գարնանացան գարու՝ 30296, եգիպտացորենի՝ 4048, առվույտի՝ 11188 և կորնգանի՝ 5452 հեկտար:
- Ծրագրերի շրջանակներում ձեռք է բերվել ընդամենը 7257.9 տոննա սերմացուներ, որոնց գնման արժեքը կազմում է՝ 2 962.9 մլն դրամ, իսկ ծրագրերի իրականացման համար ընդամենը ծախսվել է 3 234.3 մլն դրամ, որից 271.4 մլն դրամը՝ ԱԱՀ-ի, մաքսային ձևակերպումների, բեռնաթափման-բեռնման, մարզեր բեռնափոխադրման և այլ ծախսերն են:
- 2011-2015 թվականներին ծրագրերի իրականացման համար ծախսված 3 234.3 մլն դրամից հողօգտագործողներին սուբսիդավորված գներով վաճառված սերմացուների դիմաց վճարման ենթակա գումարը կազմում է 1 112.3 մլն դրամ, որից 2015 թվականի մարտի 20-ի

դրությամբ վճարվել է 920 մլն դրամ, պարտքը կազմում է՝ 192.3 մլն. դրամ, որը այս գարնանը հատկացված սերմացուների արժեքն է, վճարումներն ընթացքի մեջ են: Հողօգտագործողներին ծրագրերի շրջանակներում սերմացուների համար տրամադրված սուբսիդավորման գումարը կազմում է 2 122 մլն. դրամ:

• 2010 թվականին գարու ընդհանուր ցանքատարածությունը կազմել է՝ 61.2 հազ.հա, որից պահպանվածը՝ 60.9 հազ. հա, գարնանացան գարու ընդհանուր ցանքերը՝ 57.5 հազ. հա, պահպանվածը՝ 57.3 հազ. հա, գարու համախառն բերքը կազմել է 118.6 հազ. տ, որից գարնանացանինը՝ շուրջ 114.9 հազ. տ, միջին բերքը՝ 20.1 գ/հա, իսկ 2014 թվականին՝ ընդհանուր ցանքատարածությունը կազմել է՝ 67.6 հազ.հա, պահպանվածը՝ 66.5 հազ. հեկտար որից գարնանացան գարու ընդհանուր ցանքերը՝ 64.5 հազ. հեկտար, պահպանվածը՝ 63.4 հազ.հա, գարու համախառն բերքը կազմել է 200.5 հազ. տոննա, որից գարնանացանինը՝ 191.2 հազ. տ, միջին բերքը՝ 30.2 գ/հա, ավելի է արտադրվել 81.9 հազ. տ գարի կամ համախառն բերքն ավելացել է 67.6 %-ով, իսկ ցանքատարածությունները՝ 6.4 հազ. հեկտարով:

• «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվում առկա միջոցներից ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի N 650-Ն որոշման համաձայն 900,0 մլն դրամ փոխանցվել է «Հայաստանի ՓՄՁ զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամին, որից 150,0 մլն դրամը հատկացվել է ՓՄՁ սուբյեկտների կողմից նոր սերնդի հսկիչ-դրամարկղային մեքենաների ձեռք բերման սուբսիդավորման, իսկ 750,0 մլն դրամը՝ գյուղատնտեսական տեխնիկայի ձեռք բերման նպատակով: Վերը նշված գումարից «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ին վերադարձվել է 564.0 մլն. դրամը, իսկ 186 մլն. դրամը կվերադարձվի մինչև 2015 թվականի սեպտեմբերի 1-ը:

Հացահատիկ և հատիկաընդեղեն մշակաբույսերից հետո կարևոր նշանակություն ունի կարտոֆիլի արտադրությունը: Կարտոֆիլի տնկանյութի տեղական արտադրության հիմքերը դրվել են դեռևս 90-ական թվականների կեսերին: Հանրապետությունում կարտոֆիլի ցանքատարածությունները կազմում են 31-33 հազ. հեկտար, որոնց համար տնկանյութի պահանջարկը կազմում է 114-120 հազ. տ, որն ամբողջությամբ ապահովվում է կարտոֆիլի տնկանյութի արտադրության մեջ մասնագիտացված մասնավոր տնտեսավարողների կողմից: Սորտաթարմացման նպատակով յուրաքանչյուր տարի արտերկրից (Հոլանդիա, Գերմանիա) ներմուծվում է 1800-2500 տ բարձր վերարտադրության տնկանյութ:

Եվրասիական տնտեսական միությանը միանալու պայմաններում հնարավորություն է ստեղծվել կարտոֆիլի արտահանման ծավալների ավելացման: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունում կարևորելով այդ հանգամանքը, հաշվի առնելով ներմուծվող տնկանյութի ծավալների նվազումը և սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսավարողների առաջարկությունները, նախատեսում է «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվեհամարում առկա ֆինանսական միջոցներից՝ բանկային երաշխիք ներկայացնելու պայմանով, փոխառության պայմանագրով մինչև 200,0 մլն. դրամ հատկացնել «Հայկական ագրարա-գյուղացիական միավորում» ՀԿ-ին՝ արտերկրից 500 տ բարձր վերարտադրության կարտոֆիլի տնկանյութ ներկրելու և կազմակերպության անդամ սերմնաբուծությամբ զբաղվող տնտեսավարողներին պայմանագրային հիմունքներով հատկացնելու համար: Հատկացված գումարի 50 %-ը՝ մինչև ընթացիկ տարվա հունիսի 1-ը, իսկ մնացածը՝ մինչև նոյեմբերի 30-ը «Սերմերի գործակալություն» ՊՈԱԿ-ի նպատակային հաշվին վերադարձնելու պայմանով:

Հանրապետությունում բանջարաբոստանային մշակաբույսերի սերմացուների պահանջարկը հիմնականում բավարարվում է արտերկրից ներմուծվող սերմացուների հաշվին: 2013 թվականի հանրապետություն է ներմուծվել 35.2 տ տարբեր բանջարաբոստանային մշակաբույսերի սերմացուներ, իսկ 2014 թվականին՝ 29.4 տոննա:

Տարեցտարի ավելանում է հողօգտագործողների հետաքրքրությունը բանջարեղենի՝ հատկապես լոլիկի տեղական սորտերի նկատմամբ: Բանջարեղենի սերմնաբուծությամբ հիմնականում զբաղվում է նախարարության համակարգում գործող «Բանջարաբոստանային և տեխնիկական մշակաբույսերի գիտական կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, որը տարեկան արտադրում է 400-500 կգ բարձր վերարտադրության բանջարեղենի (լոլիկ, վարունգ, տաքդեղ՝ կծու և քաղցր, սմբուկ և այլն) տեղական սորտերի սերմացու, որն ամբողջությամբ իրացվում է:

Վերը նշված և հողօգտագործողներին հատկացվող պետական աջակցության շարունակական ծրագրերի (մատչելի գներով ազոտական, ֆոսֆորական և կալիումական պարարտանյութերի, դիզելային վառելանյութի տրամադրում, սերմացուների գների և վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում) իրականացման արդյունքում 2014 թվականին բուսաբուծական համախառն արտադրանքը կազմել է 605.7 մլդ.դրամ, 2010 թվականի 393.0 մլդ. դրամի դիմաց, իսկ ցանքատարածությունները՝ 2010 թվականի համեմատությամբ ավելացել են 49.2 հազ. հեկտարով կամ շուրջ 17 %-ով: 2015 թվականի կանխատեսումներով ցանքատարածությունները կավելանան 14.5-15.5 հազ. հեկտարով: